«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի թիվ 1080-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման առանձնացված խմբեր և դրանց անատոմիական-բուժական-քիմիական (ATC) ծածկագրեր

- **համակարգային ազդեցությամբ հակավարակային դեղեր.**
  - ✓ հակաբակտերիային դեղեր (ATC J01)
  - ✓ հակասնկային դեղեր (ATC J02/D01B)
  - ✓ հակամիկոբակտերիային դեղեր (ATC J04)
  - ✓ հակավիրուսային դեղեր (ATC J05)
  - ✓ իմունային շիճուկներ և իմունոգլոբուլիններ (ATC J06)
  - ✓ պատվաստանյութեր (ATC J07)
  - ✓ աղիքային հակավարակային դեղեր (A07A)
  - ✓ հակապրոտոզոային դեղեր (P01A)
- **միզոպրոստոլ պարունակող դեղեր (ATC G02AD06/A02BB01)**
- **համակարգային ազդեցությամբ հորմոնային դեղեր (ATC H01-H05)**

Հորդորում ենք, ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ այս փուլում առանձնացված են **համակարգային ազդեցությամբ հակավարակային և հորմոնային դեղերը**, **որոնց ATC ծածկագրերը տարբերվում են դրանց տեղային ազդեցությամբ տարբերակների ծածկագրերից, որոնք էլ ընդգրկված չեն այս փուլում առանձնացված խմբերում:**

Օրինակ՝

- ✓ գենտամիցին պարունակող դեղի տեղային կիրառման միաբաղադրատարր դեղաձևերի (քսուք, նրբաքսուք, լուծույթ) ATC ծածկագիրն է **D**06AX07,
- ✓ գենտամիցին պարունակող աչքի համար նախատեսված դեղաձևերինը՝ **S01**AA11,
- ✓ գենտամիցին պարունակող ականջի համար նախատեսված դեղաձևերինը՝ **S02**AA14,
- ✓ գենտամիցին պարունակող միաժամանակ աչքի և ականջի դեղաձևերինը՝ **S03**AA06,

- ✓ իսկ գենտամիցին պարունակող ներարկման լուծույթներինը՝ **J01GB03:**

Հետևաբար, 2024 թվականի մարտի մեկից պարտադիր դեղատոմսով բաց թողնվող դեղերի ցանկում պետք է դիտարկել միայն վերջինը՝ ներարկման լուծույթը, որի ATC ծածկագիրն է J01GB03:

Որպես օժանդակ տեղեկատվական աղբյուր կարելի է օգտվել նաև ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲ ընկերության կայքի «Դեղերի գրանցումը» բաժնում առկա գրանցված դեղերի ցանկից՝ 31.01.2024թ. դրությամբ.

https://pharm.am/index.php/am/2014-09-16-06-29-36/102-2015-04-06-14-11-25

Ցանկը ներառում է ինչպես համընդհանուր, այնպես էլ առևտրային անվանումները, ինչպես նաև ATC ծածկագիրը և բաց թողնման կարգավիճակը:

Դեղերի համընդհանուր անվանումների և ATC ծածկագրերի մասին ավելի մանրամասն տվյալները հասանելի են Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ համագործակցող կենտրոնի կայքում.

https://www.whocc.no/atc_ddd_index/